

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ՍԵՒԱՆ «ՄԱՍԻՍ» ՏԱՐԵԳԻՐՔ

Բ. Տարի, 1935, Սոփիա.

Պարսամեան եղբայրների «Կեսեմ եւ Արևստ»-ի կողմին Արմեն Սեւանի «Մասիս» տարեգիրքն էլ, կարծես, սահմանած է ապրելու: Առաջինը գերազանցապէս ուշադրութիւն է դարձնում արտաքին գեղեցկութեան վրա, «Մասիս»-ը, պահելով հանդերձ արտաքին վայելչութիւնը, գլխաւոր տեղը տալիս է բովանդակութեան: Այս տարի էլ Արմեն Սեւանի տարեգիրքը օժտւած է բազմակողմանի եւ հետաքրքրական բաժիններով - գրականութիւն եւ գեղարւեստ, գիտութիւն, դիւան հին ու նոր թղթերի, բուլգարական երէկն ու այսօրը, անհետացող դէմքեր եւայլն: Գրական բաժինը բաղկացած է մի քանի մասերից - արձակ ու չափածոյ հայկական նիւթեր, էջեր բուլգար գրականութիւնից, արձագանք Հայաստանից, եւ մշակոյթը արտասահմանում, գրախօսական, երգիծական եւայլն: Այս բաժինը, որ բրնձնում է հասորի գրերէ կէսք, կազմած է խնամքով ու նաշակավ: Արմեն Սեւանը վարպետ է գրական - գեղարւեստական կտորների բնտրութեան մէջ: Բաժնի ամենէն սիրուն կտորը, ի հարկէ, Արարեկի Մաշկերս գիւղի «Օրօր»-ն է, որ Արմեն Սեւանը առել է իր հաճուցեալ մօրից: Որքան եւ նեղ լինին «Վ.Է.մ»-ի էջերը, մնեն անպատճառ ուզում նենք առաջ բերել այդ գոհարը: Արձէ, որ մեր հմուտ երաշտագիտներից մէկը ճայնագրէ, որ տարածւի իբրև օրօրուցի երգ:

Զագուկս օր օր կանչիմ օրերուդ,
Թեւիկս դէմ դնեմ գալած չարերուդ,
Չարերուդ, չարերուդ քու վատ օրերուդ.

Օր օր, օր օր:

Օր օր, օր օր, իմ նուան հատիկ,
իմ նուան հատիկ, խնձորի մորմիկ,
խնձորի մորմիկ, նարնջի կտիկ,
նարնջի կտիկ որ նոր է մորմեր,
Որ նոր է մորմեր՝ պտուղ չէ տւեր.

Օր օր, օր օր:

Օր օր, օր օր, իմ հոգուն հոգեկ,
իմ հոգուն հոգեկ՝ իմ նորտունի էգեկ
իմ նորտունի էգեկ, որ նոր է ժմներ.
Որ նոր է ժմներ, խաղող չէ տւեր.

Օր օր, օր օր:

Օր օր, օր օր, օրըդ շատանայ,
Օրիկըդ շատանայ՝ տարեկդ երկընայ.
Տարեկդ երքայ հարիր տարւայ մօտենայ:

Օր օր, օր օր, իմ գարնան գանձնուկ,
իմ գարնան գանձնուկ՝ աշնան պըլպըլուկ:

Օր օր, օր օր:

Արդրուկս պաղչաններու կիւլն ես դուն,
Պատըտիկս շափախին պիւլպիւլն ես դուն.

Օր օր, օր օր:

Գրական բաժնից յեսոյ ամենից շատ
տեղ գրաւողը «Բուլգարահայը երէկ եւ
այսօր» բաժինն է: Յ. Քիւրտեանը փոր-
ձում է ներկայացնել բուլգարահայ մը-
շակոյթի յիշատակարանները, եւ ի մի-
ջի այլոց, ցաւ է յայտնում, որ Ֆիլիպէ
ապաստանած էտիրնեցինները չեն ծախած
իրեն իրենց մօտի ձեռագիրները: Մենք
կարող ենք, ընդհակառակը, շնորհաւո-
րել, որ էտիրնեցի հայրենակիցները չեն
յօժարած հայ մշակոյթի յիշատակա-

բանները շուկայ համել եւ մի քանի դռւարի փոխարէն Ամերիկա նամքել։ Հայ մշակոյրի յիշառակարանների տեղը Ամերիկան չէ, այլ Հայաստանի քանգարանը, կամ արտասահմանի հայ մատենադարանները։

Այս բաժնի արժեքաւոր նիւթերից են եւ դերասան Վ. Շահինեանի բռուցիկ տեսուրինը բուլգարահայ քատրոնի մասին, Ն. Գասապեանի «Վէլիօ-Թոնովո»-ն՝ տեղի հայ զարութի եւ եկեղեցու պատմութիւնը, Ե. Յակոբեանի «Բուլգարահայ առեւտրական դասակարգը», դժբախտարար, նյոնակո բռուցիկ մի ակնարկ, եւ մի շարք տեղեկառու ու վիճակագրական նիւթեր։ Այս վերջներից յիշենք բուլգարահայ վարժարանների 1933-34 թ. հետեւեալ թւական պատկերը։

1933-4 թ. Բուլգարիայի 13 հայ համայնքներում կար 15 հայ դպրոց, 91 ուսուցիչներով (62 հայ եւ 29 օտար) եւ 2355 երկուր աշակերտներով։ Ամենց մեծ դպրոցը Փլուվտիկ Վ. Կառլանեան վարժարանն է՝ 19 ուսուցչով (16 հայ, 3 օտար) եւ 627 աշակերտով (337 մանչ, 290 աղջիկ), ապա՝ Վանայի Միսահեան վարժարանը՝ 8 ուսուցիչ (6 հայ, 2 օտար), 288 աշակերտ (151 մանչ, 137 աղջիկ), Ռուսանուքի Ս. Մեսրոպիան վարժարանը՝ 7 ուսուցիչ (4 հայ, 3 օտար), 248 աշակերտ (143 մանչ, 105 աղջիկ), Բուրգազի Հայկագետն վարժարանը՝ 6 ուսուցիչ (3 հայ, 3 օտար), 237 աշակերտ (123 աղջիկ, 114 մանչ), Սոփիայի Արամեան վարժարանը՝ 4 ուսուցիչ (միայն հայ) եւ 208 աշակերտ (107 մանչ, 101 աղջիկ), եւայլն։

Չափ հետաքրքրական կը լիներ, երեւարեգիրքը չսահմանափակւելու միայն մէկ աղիւսակով, այլ աւելի հանգաւանօրէն պատկերացմէր բուլգարահայ կըրպական գործը։ 2355 աշակերտը բուլգարահայ դպրոցական հասակի երեխանների ամբողջական թիւը չէ. իսկ ի՞նչ դրաբեան մէջ են միւսները՝ մնում են ամուսում, քէ՞ օտար դպրոցներում են

սովորում. երեւ վերջինս է, ի՞նչ է նըրանց վիճակը ազգային տեսակետից։

Հետաքրքրական են եւ Գրութեան հաշի մասին առաջ բերած տեղեկութիւնները. 1933-34 թ. Բուլգարիայում եղիլ են 14 մասնանիւլ 1,016 անդամներով եւ 242,435 լէվ ընդհանուր մտքով։ Երեւ այս թւերը բաղդատենիք, օրինակ, երկու անգամ աւելի մեծ հայութիւն ունեցած ֆրանսայի Հ. Կ. Խաչի հետ, Բուլգարահայ Գր. Խաչի կառարած աշխատանքի արժեքը կ' աւելի կը բարձրանայ։

Վերջապէս, մի քանի խօսք էլ «Դիւան»-ի «ին ու նոր բդրեր»-ի մասին։ Այսուղի, առաջ է բերած Ներսէս Պատվարժապետանի առաջնորդներին, հոգեւորականներին եւ ազգային մարմններին ուղղուած (1880 թ. յուն. 18) կոնդակը Վանի, Ալաշկերտի եւ Բայաղէդի շրջանների սովորական օգնութեան նըրպաստ հանգանակելու մասին։ Կոնդակում ասւած է, թէ Պալսում կազմուած է կենտրոնական մասնաժողով, իսկ քաղերում եւ գաւառներում՝ տեղական նիւթեր, որոնք պիսի դիմեն «Ազգին Գրութեան»։ Այս ձեռնարկը, որի հոգին էր Խրիմեանը, ժամանակին մեծ դեր կատարեց սովահար ժողովրդի փրկութեան գործում։

Միւս վաւերագրեթե են «Օգնութեան Կոչը» 1887 թ. Զէյթունի մեծ հրդեհի առքի, Հ. Ն. Ակիմեանի մի քանի նամակները հշմանածնից եւ Վիկտորյայից, եւ մի վաւերագրի Բուլգարահայութեան Բայկանեան պատերազմին մասնակցութեան վերաբերող։ Խօսքը Անդրանիկի կամառուական խմբի մասին է։

Ինչպէս ասացիմք, տարեգիրքը բռվանդակում է բազմակողմանի եւ հետաքրքրական նիւթեր։ Աւելացրէք վլաս եւ բազմարի ու մաքուր տպւած պատկերներ։ Արմէն Սեւանը աշխատում է առաջ հանգուցեալ Թէոդիկի տարեգիրքը փոխարինող մի հասոր - դժւար գործ, որ սակայն որոշ չափով յաջողուում է։ Երեւ հասարակութիւնը բաջակը - եւ

պէ՛տք է որ ժաջալերէ ու տայ նիւ-
րական հնարաւորութիւններ, «Մա-
սիս»-ն, ամշուշտ, կը լինի Թէռդիկի

գործը շարունակող մի հրատարակու-
թիւն:

ԵԲ. ՕՏԵԱՆ՝ «Ընկեր Փանջունի»,

Իրատ. «Նահատակ Գրագէտ. Բարեկամ ներ»-ի, թիւ 9, Փարիզ, 1935.

«Նահատակ Գրագէտ. Բարեկամներ»ի լոյս ընծայած վերջին հասորը (№ 9) յատկացւած է ամբողջապէս «Ընկեր Փանջունի»-ին: Այնած է ինչ որ Օտեանը գրել է այս նշանաւոր «Յեղափոխական»-ի մասին: «Առաքելութիւն մը ի ծաղլվար», «Ընկեր Փանջունի Վաս-պուրականի մէջ» եւ ընկ. Փանջունի «աշխարհայիշացք» բնորոշող «գրա-խօսութիւններ օրուայ հարցերուն շուրջ»: Դուրս է մնացել միայն «Ընկեր Փանջունի տարագրութեան մէջ» անաւարտ հատ-ածը, որ անարժէք է քէ գրական եւ քէ Փանջունի տիպի լրացման տեսակե-տից: Հատորի վերջաւմ դրւած է «Պահ-պանդականը»՝ «պոլսական տիպար մը», իսկ ակիզրը՝ Օտեանի ամփոփ կենսա-գրականն ու հեղինակութիւնների ցան-կը: Դիրքը հրատարակւած է «Ն. Գ. Բա-րեկամներ»-ի Մատենաշարին յատուկ բժանմերութեամբ եւ արտաքին վայել-չութեամբ:

Անշուշտ, խմբագիրները ծանր խնդրի առջիւ են կանգնած եղել Ե. Օտեանի հա-սորը կազմելիս. ի՞նչ ընտրել, ո՞րը առ-նել Օտեանի անհաշիւ գործնից: Ե. Օտ-եանը օրը օրին գրող մարդ էր. արտա-դրսում էր արագ եւ առատ, անկարգ, յանախ առանց ծրագրի եւ նախօրոք կազմած բովանդակութեան: Գրում էր ինչ որ գրութեան վայրկեանին գալիս էր գրչին: Շատ անգամ՝ ոչ որպէս ներ-շընչում, այլ իրեն պարտականութիւն, նաև «հացի համար»: Այսանդից՝ նրա գարմանալի անփուրութիւնը, չասելու համար աւելին, դէպի իր գրիչն ու գր-րութիւնները: Ե. Օտեանի երկերում, ազնիւ ոսկին եւ անպէտք քարը անքա-տելիօրէն խառնւած են իրաք:

Հատորի խմբագիրները ընդհանուր առամամբ նիշտ են լուծել խնդիրը՝ Ե.

Օտեանի գրութիւնների գէզից ընտրելավ «Ընկեր Փանջունին», որովհետեւ այս գրւածքը նախ Օտեանի ամենէն մնա-յուն գործն է, երկրորդ՝ գեղարւեսու-կան տեսակետից՝ ամենէն յաջողւածը եւ բնորոշը հեղինակի տաղանդի համար: Ե. Օտեանը շատ փայլուն էջեր ունի, բայց իր անմահութիւնը պարտական է Փանջունին, որ իրեւ գրական տիպ յատիսնական է հայոց գրականութեան մէջ, ինչպէս յատիսնական են Արքու-ղան, Պեղոս:

«Ընկեր Փանջունի»-ի բոլոր մասերը նոյնարժէք չեն: Ամենէն կատարեալը, ի հարկէ, առաջինն է՝ «Առաքելութիւն մը ի Ծաղլվար»: Այսուղ Օտեանը գործ ունի գլխաւորապէս ընդհանուր երե-ւոյքների եւ տիպերի հետ: Հեղմանէի սուր նշդրակը ձեռքին, իսկական ար-ևեստագէտի լրջախնութեամբ եւ հնա-րաւոր առարկայականութեամբ ճան ներ-կայացնում է կեանէի բացասական, ծի-ծաղէի կողմերը: Այդ պատմանով նրա գրչի տակից դուր են եկել կենդանի եւ անմահ տիպեր ու պատկերներ: Ընկեր Փանջունի, Տէր Սահակ, Ռէս Սէրքօ, իւել Աւ, Սմենց Վարդան, Քէլէշ Մրկօ, Կոլոշենց Սեղո - ում ծանօթ չեն Օս-մաննան Սահմանադրութիւնից յատոյ Պոլսում եւ գաւառներում սունիի պէս բուսած այս հերսոնները: Ե. Օտեանի տաղանդի մեծութիւնը նրանումն է, որ նա սուր դիտողութեամբ դիտել է այդ հերսոնների յատկանշական գծերը եւ խը-տացնելով ու ընդհանրացնելով՝ ստեղ-ծել է գրական կենդանի տիպարներ: Ե. Օտեանը, ընդհանուր առմամբ, իրական գծերով ու գեղարւեսորէն վիրարտա-դրել է եւ այդ հերսոններին յատուկ գաղափարներն ու գործերը: «Մի ժիշ փո՞ղ» - այլեւս մեր կեանէի եւ գրա-